



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material






Ltn.  
✓ 754



1999



# ԿՐԹՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԷՐԱԿԱՐԴ ՀԱԲՈՒԼԵ

Յարդմանութիւն Ա. Տեր-Գրիգորեանց

Տպագրութիւն Միքայելի Միանուարեաց



- I. ԵՆՔՆԵՐԹՈՒԹԻՒՆ
  - II. ԱԶԴԵՑԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ
  - III. ԱԶԴԵՑԻՆ ԳՐԱՍՏՈՒՆԵՐԸ

ad-424

ԱՐԵՏՈՎԻ ՊՐԵՄԻԱ

Въ Типографії А. Траншица, на ул. Невскаго и Владижерской д. 45 — 1.

1867.



С.П.Б.Ф.Д.И

# САДОВЫЙ ГИД.

Сборник садоводческих и оранжерейных

## САДОВЫЙ ГИД.

Нечатать разрешается С.-Петербургъ 1867 года 14-го Января.



I	Садоводческий гид
II	Садоводческий гид
III	Садоводческий гид

4254-60

29 255

Садоводческий гид

Садоводческий гид

Садоводческий гид





ՆՈՐԻՆ ՎԵՃԱՓՈԽՈՒԹԵԱՆ


# ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԳԵՂՈՐԳԱՅ

ՕԵՅՐԵԳԱՅՆ ՊԵՏՐԵՐԳԱՅՆ

ՄԱՅՐ ԱԹՈԱԽ ՄՐԲՈՑ ԷՀԱՐԴԱՌՆԻ

ԵԿ ԿՈ ՔՈ ԿՈ ԿՈ ՍԻ Ե ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Դ Ա Տ Ե Ր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

# ՅԱՐԴԱՔ ՀՈՍՔ ՀՈՍՔ

ԱՊՐԵԼ ՎԻՃԱԿ ԱՌԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տարբերակ նոյն 00-0000 1677

ՏԱՏԱՐ ԺՈՂՋԵՐ ԺԿԱԲԿԱՑԱԿԱՐ ԱՅ

## ԱՅՆԱՓԵԼԻ ՀԵՅՐԻ

Այս գրքի մէջ՝ յատկապէս և գլխաւորապէս խօսվումէ ազգային կրթութեան, ինքնակրթութեան և ժողվըդական գրատունների վերայ: [Որովհետեւ 1] եհափառութեանդ կոչումը, առաջին ու վերջին պարտականութիւնն է այդ հարցերին դարման տալ, ըստ չափու կարողութեան, և մեր ազգի կարօտութեան ու հարկաւորութեան համեմատ տնօրէնութիւն անել նոյն իսկ ազգի հետ միասին, — մեղքաղցր թուեցաւ այս տպագրութեան ճակատը՝ Ձերոյին Ա եհափառութեան անուամբ պսակել:

## ԱՅՆԱՓԵԼԻ ԽՈԺՈՎՈՒՄ

Խոնարհ որդիկ

Միքայէլ Մհարոպեան

Միանարեանց:

• 100 •

անո՞ւ որդի ծագումը մէկմէնու ոմ քեզու ու ուստի այս վայրութիւնը  
ու առ այս պատճեան չ ուց ։ և զի՞ զազդով շատ մասն հայուած  
տան և մինչ ուստի ու զայդու ոմ մասն ու զայդու չ ում  
մաս նոն անում ոչ մայլ ուստի հայու զայ ։ և ուստի ուստի ուստի  
զայ ոմ մասն ։ և անու մայ ոչ ուստի ուստի ուստի ուստի ։ և ան  
ուստի ուստի ։ ուստի ուստի ։ և անու ուստի ։ և ուստի ուստի ուստի

### ԵՐԱՎԵՐԿՐԹԻՏԻԹԻԿԱ:

այսուղ զայդով ոչ ուստի ուստի ուստի ուստի ուստի ուստի ուստի  
զայ ։ և անու ուստի ։ ուստի ուստի ուստի ուստի ։ և ուստի ուստի  
զայ ։ և անու ուստի ։ ուստի ուստի ։ և ուստի ուստի ։ և ուստի ուստի  
զայ ։ և անու ուստի ։ ուստի ուստի ։ և ուստի ուստի ։ և ուստի ուստի  
զայ ։ և անու ուստի ։ ուստի ուստի ։ և ուստի ուստի ։ և ուստի ուստի

Պատուելի Տիկնայք և Պարոնայք,

Ալ յուսամ մեր հասարակութեան և ներկայ ժողովի ընդ-  
հանուր փափաքը լուսցանել, յայտնելով նախ և առաջ շնոր-  
հակալութիւն պ. քաղաքապետին, որ իւր ներկայութեամբը  
այսուել պատուասիրեց մեզ :

Խնչպէս որ արդէն լսած էք, մեր գրատունը հիմնած է և  
պահպանվումէ միայն մեր սեփական միջոցներով (ինչպէս որ  
տեսաք, խիստ նուազ միջոցներով), բայց այդ գրատունը լի-  
նելով հասարակական հիմնարկութիւն, առնելով այդ բառը  
իւր ընդարձակ նշանակութեամբ, բաց է ամենի համար: Ուստի  
ամեն անդամ մենք մեզ բախտաւոր ենք համարելու, երբ մեր  
նահանգի առաջին պաշտօնատարը իւր այցելութեամբ և խոր-  
հուրդներով կը պատուասիրէ և կ'օգնէ մեզ:

Ը նորհակալութիւն նոյնպէս Ոօրբօնի\* պ. Ա ից-Ենկո-  
րին, որ քաղցրութեամբ հաճեցաւ շնորհել մեզ այս մեծ դաշ-  
լիճը, որի մէջ սովորաբար հաւաքվումն աւելի ուսումնական  
հասարակութիւն, քան թէ մենք: Օ արժանալի չէ արդեաք  
Ոօրբօնի համար, որ նորա մէջ հաւաքվումն ամենայն կողմից

\* Ոօրբօնը հին եւ երեւելի համալսարան է Փարիզում:

այնպիսի անձինք, որոնց նա ամենելին սնուցած չէ իւր հովանաւորութեան տակ: Աօրբօնը ծեր է, շատ է ապրել, շատ բաներ է աեսել, ուրեմն նա պիտոյ է ներողամիտ լինի և բնաւզարմանալու չէ այդ բանի վերայ: «Աաե կը ներեմ ինձ ասելու, որ այդ յառաջադիմութիւնը այն գործի մէջ՝ որին նա ինքը միշտ նպաստաւոր և հետամուտ է եղել, պէտք է առանել ուրախացնէ նորան: Անոնց քայլ որբանից առաջ, երբ գիտութեան միակ ապաստանարանը եկեղեցին էր, Աօրբօնը պատըսպարեց իւր մէջ հոգեորականներին, որոնք եկել էին այդ տեղ ուսումն առնելու: Ա երջերումն, երբ որ ազնուականների և միջին գասակարգի մարդոց մէջ զարթեցաւ ուսանելու ցանկութիւն, Աօրբօնը ընդարձակուեցաւ և բաց արաւ երիտասարդներու համար ամեն աեսակ գիտութեան առանձին առանձին գասարաններ: Ա յժմ մի նոր քայլ դէպի առաջ, այժմ ինքը ժողովուրդը պահանջաւմ ուսումն և լուսաւորութիւն. Ի նշակա կարելի է չուրախանալ այդ իսի հիւրի գալստեան. մի թէ Աօրբօնը այդ հիւրին իւր վաղուցուայ մոռացած զաւակներից մինը համարելու չէ, որ այժմ վերադարձել է տուն և պահանջումը իւր աեղդը մայրական օճախի մօտ:

Աղջոյն ծեր Աօրբօնին և մեծապէս շնորհակալութիւն նորահիւրնկալութեան համար:

Հիմի, պատուելի պարոնայի և տիկնայք, կը խնդրեմ ձեզ զանից թոյլառութիւն ձեզ հետ որբան կարելի է պարզապէս խօսելու: Ձմէն ես հւետոր չեմ, բայց յարգումեմ հոնեարութիւնը, նորան ես մեծ նշանակութիւն եմ տալիս այնպիսի ժողովներում, ուր հարկաւոր է շարժել կամ հանդարտեցնել լսողների կիրքը. բայց այս տեղ, մեր մէջ, մեր գործերի մասին խօսելու համար, ոչ իւրօնու մարմաշարժութիւնը են հարկաւոր և ոչ մեծահնչիւն նախադասութիւնը:

Ճշմարտութիւն է մեզ հարկաւոր. ճշմարտութիւնը միշտ միտս է բերում ազնուամիտ և պարկեշտ կնոջ պատմութիւնը, որ մեծամեծ ծախսերով և գժուարութիւնը կը լրած այլանդա-

կարար լոյնացնումը իւր կրիսօլինը, գլենի քամակին կպցնումէ  
ուստ մտղից շինած մեծ հիւսակներ և վերջապէս, մխութով  
բոլոր ունեցած չունեցածը, համոզվումէր որ իւր մկրան այդ  
բաները անելուց շիւտոյ, եւ պարկեշտ կնամարդու նմանութիւն  
բնաւ չէ մեացել: Առներ վերաբերելի և ճշմարտութեան  
երբ որ ճշմարտութիւնը պահում վայ ու ներկվում ստա-  
նում: սուսութեան կրաբարներ: Առողնենք ճշմարտութեան իւր  
բնական պարզութիւնը գա նորս գլխաւոր գարդն ու գեղեց-  
կութիւնն է: այդ պարզութեան և նա պարտական որ ով նո-  
րան մի անդամ ճանաչէ, եւ չէ կարող աչքն ու սիրութ ըստ  
նորմեից անոր ուսուրան:

Այս կամենութեի խօսել ձեզ հետ գրատան մասին բայց  
ձեզ արդեւ տուած են այնպիսի ճիշդ և մանբաման հաշին ու  
ուղեկութիւն որ ինձ կը մնար այս տեղ միայն փոփոխել մի  
և նոյն բանը, չպիսեմ ձեզ ինչպէս է թվամ, բայց իմ համար  
այդ փոփոխելուց զզուելի թան չկայ: Այս բարեւք կը համա-  
րեմ ընարել խօսակցութեան մի ուրիշ ասարկայ, որ գրատան  
հետ շատ մօտիկ կատակցութիւն ունի ես կը խօսիմ ձեզ հետ  
կրթութեան և դժևառութապէս ինքնակրթութեան միրայ: որ  
ընթերցանութեամբ և ձեսք բերվում, ես կաշխատեմ կազմ-  
նակի ճանապարհով ցցց տալ ձեզ գրատան օգնուար և գրա-  
ւել ձեր բոյրի համակրութիւնը գեպի այց հիմնարկութիւնը:  
Անչ է կրթութիւնը, հարկաւոր և անպատճառ բացարել  
այդ բանը բատ որում առհանարակ բոլոր ևզած բացարու-  
թիւնը մի պակասութիւնը ունի, այսինքն ոչ անողը հաս-  
կանում իւր բացարութիւնը և ոչ նաև որի համար անումն  
այդ բացարանթիւնը: Վայց ես կաշխատեմ բացարել պարզ  
ու հանկանալի կերպով և հարատակել օրինակներով: Որթու-  
թիւնը և գիտութիւն կենցազավարութեան կամ բառ ապրե-  
լու արշեատ:

Այսկրագործութիւնը, օրինակ, և արհեստ երկրից այն-  
քան բան քաղելու որբան որ հող կարող է յանաջ բերել:

նմանապէս և կրթութեան նպատակն է քաղել մարդից այնքան բան բան, որքան որ նա կարող է տալ, այլապէս ասենք, զարգացնել նորա բոլոր գործարանքը և ընդունակութիւնքը, բայց որովհետեւ մարդու բոլոր երջանկութիւնը յառաջանում գործարանների և ընդունակութեանց լիապէս զարգանալուց, ուստի այն գիտութիւնը, որ նպաստառորում այդ զարգացման, որ սովորացնում մարդուն օգուտ քաղել իւր ընդունակութիւններից, և մի և նոյն ժամանակ գիտութիւն կենցաղավարութեան:

Այս իմ բացատրութիւնը. այժմ աշխատենք դորա ճըշդութիւնը հաստատել:

Կրթութիւնը, ինչպէս ասացինք, մարդուս գործարանների և ընդունակութեանց լիակատար զարգացումն է: Վնչ բաններ են այդ գործարաննքը և ընդունակութիւնքը. այսուղ ես պարտաւորուած եմ գլուխ փիլիսոփայութեան, բայց ես կաշխատեմ, որքան կարելի է, համառօտ ու պարզ խօսել:

Եթէ մենք մեր անձը քննենք, առաջին բանը, որ մեր ուշը իւր վերայ կը դարձնէ, — մեր մարմինն է: Վեր մարմինը բազկանում գործարաններից, որոնք կատարումն մեր յարաբերութիւնը արտաքին աշխարհի հետ աչքերը ծառայումն առարկանները տեսնելու համար, ոտքերը — նոցա մօտենալու, ձեռքերը — բռնելու, ականջները — մեզ նմանների հետ հաղորդակցութիւն ունենալու, ձայնը — նոցա պատասխաննելու համար:

Այս մարմինը և գործարանքը, որոնք առաջ ու առաջ դպչումն մեր աչքին. այդ գործարանքը վարժութեամբ կարող են զարգանալ և զարմանալի նրբութեան հասնել: Այս մարմինը, եթէ կարելի է այսպէս ասենք, մեքենայի արտաքին մասն է. ներսը կայ մի զօրութիւն, որ գործարաններուն շարժողութիւն է տալիս և կառավարում նոցա. այդ զօրութիւնը այնքան մեծ է, որ կարող է տանել մարմինը դէպի այն կողմը, ուր գուցէ նա ամեննեին հակամիտ չէ գնալու: Այդ ներքին զօրութիւնը հոգին է, որ ունի ընդունակութիւնք, ինչպէս որ մարմինը ունի գործարանք: Փիլիսոփայութիւնը դասակարգել

Է հոգու ընդունակութիւնքը, նա բաժանել է հոգին երկու մասն, որ մենք ինքներս, բազեական մտածողութիւնից յետոյ, կարող ենք նկատել մեր մեջ՝ առաջինը է խելքը, որի գործը ուրիշ բան չէ, բայց եթէ քննել շշմարտութիւնը, խելքն էլ նմանապէս բաժանվում զանազան ընդունակութեանց, օրոնք արտաքին աշխարհի տպաւորութիւնքը ընդունելու համար ունին զանազան միջոցներ: Ըօշափողութեան ընդունակութիւնը յայտնի է կացուցանում մեղ առարկաներու, ներկայութիւնը, դատողութեան ընդունակութիւնը մօտեցնումէ և համեմատում երկու շշմարտութիւն, բանականութիւնը եզրակացութիւն է անում արած դիտողութիւններից. յիշողութիւնը վերաստեղծումէ յայտնագործութիւնքը, խել երևակայութիւնը համակարգումն ուղար, —այս բոլորը հոգու առաջի մասն է, որ կոչ վումէ խելք: Խելքից յետոյ հոգու մեջ, առաւել խորագոյն քան թէ նոյն խելքը, գտանվումէ այն բանը, որ մենք սովորաբար կոչումն ոիրտ, այն է կիրքերը, որոնք շարժումն մեղ, և կամքը, որ ընթացք է տալիս մեր ամբողջ մեքենային: Ա երջապէս, խելքի և սիրտի մեջ կայ մի միջին բան ևս, որ խղճանանք է ասվում: գա այն ուղիղ հայելին է, որ կարողութիւն է տալի մարդու ինքն իրան տեսնելու, իւր գործողութիւնքը գտանելու և դէպի իւր անձը ուշադիր վինելու:

Վարմին, խելք և սիրտ — ահա ամբողջ մարդը, ահա ինչ է սասանում մարդս ծնունդից և ինչ է պարտական զարգացնելու, ահա, եթէ ներելի է այսպէս ասել, այն արծաթագլուխը, որով իւրաքանչիւրը մեղանից աշխարհ է գալիս, որից պէտք է, որքան կարելի է, շատ օգուտ քաղել:

Կարելի է միթէ շարաչար գործ ածել և փշացնել այդ արծաթագլուխը աւրցրէք ձեր յիշողութեանը, տեսած չք արդեօք գպրոցում կամ արհեստանոցում մի շնորհալի, առողջ և խելացի մարդ, որ, յանկարծ անձնատուր լինելով կիրքերու, շոայլութեան, գուցէ և հարբեցողութեան, անհետացնումէ մի

քանի տարուայ միջնցում այն արծաթաղլուխը, որ եօթանաս սուն տարուայ բաւական կը լինէր: այդպահ զման դո մասն և անանկացնաւ, բայց սնանկութիւնը այդպիսի գիպուածում ցառ և մասհ է:

Կան նաև մարդիկ, օրոնքը շնոյելով որ բնութիւնից խիստ միջակ խելք են ստացել, նախանձար են համարում անգործութեան ու ծուխնան ու ծուխնան մէջ ապրիլը ։ Փարիղի մէջ ական կը պատահին այդպիսի մարդիկ, բայց նահանգներումը խիստ շատ են: Վրբան հարուստ ծնողաց զաւակներ, իրանց քնքուշ մեծացնած լինելուն և հպարտութեան պատճառով, մի գործով չեն պարագաւ, և իրանց կեանքը փշացնումն պանդոկներում, անընդունակ լինելով մի այլ ճանապարհ յարգարելու իրանց համար: Երբ որ այդ մարդիկը մեռանումն, զոյա վեր թայ արձաններ են կանցնեցնում ճոխ վերնագիրով ։ բարի հայր, բարի ամուսին, բարի որդի, և այլն: Բայց եթե ճշմարտութիւնը իրաւոնք զանանար խօսելու նա այդպիսի քարերի վերայ կը դիմըք, չանկուցեալը 30,000 բան գակ գարեջուր և խմբ 10,000 խազ (օյրեն, ուարտի) գալինա և խազացել և 100,000 սիզար և ծիսեր: զանանար դուք այս մասին ու իմ մի քանի խօսը և տեսնք սրտի և նորա պահանջողութեան մի բայց:

Կան մարդիկ, օրոնք շատ վաղ ճնշումն իրանց մ.ջ սիրոյ պահանջութիւնը, որ աղբիւր է շատ գեղեցիկ բաներու: այդ տեսակ մարդոց բան ու գործը ուրիշ բան չէ, բայց միայն իրանց կիրքերուն և ցանկութեանց անվրէպ կատարում առաջ: գործ միայն իրանց վերայ են մտածում, միայն իրանց համար են ապրում: Երբ որ այդ մարդիկը ընկնում մեռնումն, ոչ մի մարդ չէ գանվում, որ կարեկնութեամբ նայէր զոյա մահի վերայ պատճառ, այդ ողորմելիքը ոչ մի մարդու չեն սիրած և ոչ մինից էլ չեն սիրուած, բայտ որում զոյա սիրուածանկացած է եղել: առանձնաւ եղանակ, ոչ բայտ կեանքի մէջ անսած չէ

Վկանից, զօր օրինակ, իսր կեանքի մէջ անսած չէ

միտարարախոտ, վաղօրեք այրիացած, վատառողջ և աղբատ  
կին իւր նուազ և գեղ և նու չամրացած երեխաներով, այդ  
ողօրմելին գիտե, որ պիտոյ է ասպրէ իւր զաւակաց համար, և  
աշամ հոգացօղութեամբ, անիսոնջ աշխատութեամբ և արդա-  
րասիրութեամբ նա ասպրելու և զաւակները կրթելու համար է  
գտնում և ամենայն օրինաւոր մարդոց սէր և պատիւ է ստա-  
նում գործ համար: Ա աստերը դիւրաբեկ է և լցուը նուազ,  
բայց մաքուր է, ուստի ամենայն անցանող այդ զաւականէր  
մօր մօտից, անկեղծ ուրախութեամբ արտասանում: Վահա-  
առաքինի, աշամ բարեբարձ կին:

Կիւլքի մասին եւ օրինակներ բերելու չեմ, ամենայն ոք  
փրանսիայում ունի իւր խելքը և ամենեքեան առհամարակ  
գիտեն օգուտ քաղել նորանից կան նաև մարդիկ, որոնք,  
գործ ածելով իրանց խելքը շար և աններելի նպատակներու  
համար, շափազանց մեծ օգուտներ են ձեռք բերում: Խսկ հո-  
դին, սիրտը... արդեօք շահվումն դոցանից ես: Ենշուշտ...

Ի հարկէ շատերը ձեղանից, մոտաբերելով իրանց հայրենա-  
կան օջախը, աղնիւ հպարտութեամբ կարողեն ասել: Ինչ պատ-  
կառելի մարդ է հայրս, ինչ պատուական կին մայրս: Ուո-  
րանից առաւել վեհ և գեղեցիկ բան կարող չեմ ես երևա-  
կայել: Երումնեմ ինձ յիշել այստեղ օրինակի համար մի սի-  
րելի և պատուական մարդու անուն, որից շատ ժամանակ չէ  
մենք զրկուեցանք: Ա արբուստը (այդ նորա անունն է), առանց  
նշանաւոր պաշտօն ունենալու տէրութեան մէջ, անսանի յար-  
գութեան ու պատուի արժանացել էր հասարակութեան կող-  
մանէ այն ծառայութեան համար, որով նա նպաստաւորել էր  
կրթութեան տարածուելուն: Քսանը հինգ տարի սորանից առաջ  
Ա արբուստին առաջարկել էին հաշտարար զատաւորի (միրա-  
Յով շոյլ) պաշտօն, նա պատասխան էր տուել, թէ այնքան  
հարուստ չէ, որ համարձակուի ընդունելու այդ պաշտօնը.  
Խսկ ուրիշները, սովորաբար, բոլորովին դորա հակառակն են  
մտածում, «ինձ առաջարկումն տեղ», ասումն նորա, «եւ

այնքան հարուստ չեմ, որ հրաժարուիմ այդ տեղից։ Եաբ-  
րուստը պաշտօն բնդունելու համար իրան բաւական հարուստ  
չէր համարում այն պատճառով, որ այդ պաշտօնը մի աղ-  
քատ նահանգի մէջ էր, ուր, եթէ հարկը ստիպէր նորան մի  
չքաւոր մարդու դատաստանի տակ ձգել տան վարձը չվճարե-  
լուն համար, Եաբրուստի սիրուր հանդարտանալու չէր, մինչև  
որ ինքը իւր գրախնից չհատոցանէր նորա փոխանակ։ իսկ  
դորա համար նա չունէր բաւական գումար։ Կա կամենումէր  
հարստանալ այն նպատակով, որ կարողութիւն ունենար աւելի  
շատ բարեգործութիւնք անելու։ Ասումնեա, երբ դա Ա. Եաբ-  
րէ ձեմարանի վերատեսուն էր, ձենք բերած է եղել  
միլիօն ֆրանկ։ բայց մեռնելուց յետոյ նորա մօտ ոչ մի  
պէկ չեն գտել։ այդ միլիօնը նա անյայտ աղքատներու էր  
բաժանած։ Բ. Հ. ձեզ մարդ, որ արդարեւ շատ լաւ գործ  
դրաւ իւր ծնունդից ստացած սիրոյ պաշարը։

Եթէ ուղիղ է, որ մեր գործարանքը, մեր բնդունակու-  
թիւնքը կարող են զարգանալ, ապա ուրեմն կայ արգեօք մի գի-  
տութիւն ես, որ ձեռնոտու և առաջնորդ լինէր այդ զարգացման։

Եհարկէ կայ. Եթէ կարողանումնք ձի վարժել, փոխելով  
այդ խեղճ կենդանու բնաւորութիւնը, Եթէ կարողանումնք  
մեր շան այս կամ այն նպատակին յարմար կրթութիւն տալ,  
միթէ կարող չենք ասել մարդուն թէ ահա քեզ ինչ է հար-  
կաւոր կատարելազործվելու և բարերախտ կեանք ունենալու  
համար։ Արթութիւնը մարդուն կեանքի համար այնպէս մեծ  
խորհուրդ ունի, որ Լօքը, անդլիացոց երևելի փիլիսոփան,  
իրաւունք ունէր ասելու թէ տասը մարդից ինը թէ լաւ և թէ  
վատ կողմանէ կրթութեան են պարտական։ Կարծեմ որ ձեր  
ամեն մինի փորձառութիւնը կը հաստատէ այդ մարդի ճշմար-  
տութիւնը։

Արթութիւնը, ինչպէս ես արդէն ասացի, է գիտութիւն և  
արհեստ կենցաղակարութեան։ այդ գիտութիւնը և արհեստը

ուսանել ամենեցուն անհրաժեշտ հարկաւոր է. ահա կրթութեան բոլոր գաղտնիքը ինչպէս է ձեռք բերվում կրթութիւնը:

Վոաջին կրթութիւնը մեզ տալիս է մայրը. այդ կրթութիւնը գրեթէ միշտ պայմանաւորում յետագայ կեանքը: Հատ անգամ նկատել են, որ բոլոր հոչակաւոր մարդիկը շնորհալի մօր զաւակներ են եղել, որ ուրիշ խօսքերով ասել է — ոչ մի երեւելի մարդ չէ եղել և չկայ, որ լաւ կրթուած չլինէր:

Վայրն է, որ ուղղութիւն է տալիս իւր որդու խճմտանքին և ինելքին նորա առաջի արքներից մկան, և այսպէս նորա ապագայի համար նախապատրաստում բախտաւորութիւն կամ ապարախտութիւն, նայելով ո՞րպիսի ողղութիւն է տալիս: Օքոր օրինակ, մի առած կայ, որ ասումէ, թէ երես տուած երեխայի վերջը վատ է լինում»: Վոյդ առածի միտքը հականալի է, երես առած երեխան այնպիսի երեխայ է, որի ընդունակութիւնքը չեն զարգանում: Նա լաց է լինում, երբ առիպումն նորան աշխատել. ոչինչ չարած, ուզում, զուարձանալ. ամենայն բանում նա հետևում իւր կամքին և գարձը նույն երեսը աշխատաւոր կեանքից: Որու հականակ, բարեկերթ երեխան այնպէս երեխայ է, որ գիտէ աշխատել, որի ինելքն ու սիրու զարգանումն մօր հաստատ բնաւորութեան ազգեցութեան տակ: Ինական է, որ երես առած երեխայից լաւ բան չի գոյանար, մինչ գեռ լաւ կրթուած երեխան մի օր մարդ կը դառնայ և կը կարողանայ իր գլուխք պահել: Խմաստասիրելով քրէական գործերից յառաջ եկած գատապարտութիւնքը, որքան ներումքը ինձ այդ իմ պաշտօնը, ես վերահստու եղայ, որ դատապարտուածը ըստ մեծի մասին այնքան յանցաւոր չէր, որպէս կարելի եր կարծել: Վոյն մարդը, որից հասարակութիւնը երես է գարձնում իրքեւ մի վեասկար արարածից, ինչու որ գա գողութիւն է արել, մարդ է սպանել, կամ մի ուրիշ որ և իցէ վատթար յանցանք է գործել, — այդ մարդը գրեթէ միշտ որը և լինում խորթ հօր

կամ խորի մօր ձեռքով հօրական անից աքսորուած որդի առհասարակ դա լինումէ այնպիսի մարդ, որի խելքն ու սիրար ծնած օրից բռնաբարութեան տակ են եղել, որին ոչ ոք չէ սիրած և որը ոչ ոքի չէ պիրել։ Այս հանգամանքները իրառունք ունեն մեծ ուշադրութեան պահանջելու հասարակութեան կողմանէ; զայդական դուռնաւո՞ւ որուած դու ու ունեալու առաջաւ

Այդ սկզբնական կրթութեան, որ պահուումնք մօրից, հետեւումնէ եկեղեցական և դպրոցական կրթութիւնը։ Վարորդի աղջեցութիւնը շատ մեծ է, բայց ընդհանրապէս խօսելով, գպրոցը պարագումն առաւելապէս երեխայի խելքի զարգացմամբ քան թէ մոքի, այդ նորա գլխաւոր պակասութիւնն է։ Եկեղեցին, արդարն, պարագումն յատկապէս հոգու զարգացմամբ, բայց նորա աղջեցութիւնը շատ շքեւ անհետանումն մեզանից, թողնելով միայն մի տկար յիշողութիւն, որ ամենենին բաւական չէ մեղ աղատ պահելու կեանքի գայթակղութիւններից։

Դորան հետևումն կրթութեան չարրորդ աղջերը, փորձը: Փորձին վերագրումն անառելի մեծ նշանակութիւն։ Առվորաբար ասումն ապրեցէք փոքրի շատէ փորձուած մարդոց հետ, այն ժամանակ դուք ևս կը սովորեք ապրել։ Կմիելքով փորձը չափազանց խիստ գաստիաբակ է և մեծ պակասութիւնք ունի Ոտոացած չնմ, ինչպէս, տղայ ժամանակս, փորձով իմացայ կրակի յատկութիւնը, միայն շատ քանզ նստաւ ինձ այդ փորձը, աստիք այրեցի մատերու գործնվ կիմանաս, որ անշափաւոր կեանքը իսպանքարումն մարդուն առաջցութիւնը, բայց երբ կեմանաս, երբ որ բանը բանից կանցնէ և ուղերդ կը ձգես: Փորձը մի միակողմանի գաս է, մի այնպիսի գաս, որ չափազանց ուշ ենք բաւանում։ Այնք մինը ինձ վաս ընդունեց, եթէ մի քանի մարդիկ, որոնցից ես փող պարաք ուղեցի, չտուին ինձ, գորանից դեռ ևս չէ կարելի եղբափակել, որ ամենքն էլ կոպիտ ու անկարելից մարդիկ են։

Այդպիսի պատահական փորձներից յապաջանումն անհա-

մար նախապաշտումուք: Այս անգամ նեղութեան մէջ ընկար, կարծումնս, որ յաւիտեանս այդպէս պէտք է լինի: Ասյդպէս մտածել, կը նշանակէ այն անգլիացուն նմանիլ, որ եկել էր Դիմիկիրքէն<sup>\*</sup> և գրել էր իւր յիշատակարանի մէջ, թէ զիբանսիայի բոլոր կանայքը գեղին մազով են, ըստ որում իւր իջեւանած պանդոկի տիկինը գեղին մազով է եղել:

Ահա ուրեմն կրթութեան բոլոր աղբիւրները — մայրը, դպրոցը, եկեղեցին և փառձը:

Այժմեան քաղաքակրթութիւնը դաստիարակութեան չորս եղանակի վերայ աւելացրեց ինքնակրթութիւնը, որ թէև այդ չորսի տեղը բռնել կարօղ չէ, տակայն օգնումէ և լրացնում՝ նոցա: Խնքնակրթութեան միակ միջոցը է մարդոց հետ յարարերութիւն ունենալը, իսկ այդ տեսակ յարաբերութիւն ունենալու ամենալաւ միջոցը են գրեանքը, գրեանքն են, որ իրանց մէջ պահպանումն մեզ համար անցած գնացած ժամանակների փորձերը: Եատ կարդացած մարդը մի որ և իցէ հարց վրձուելու ժամանակ ոչ միայն իւր, այլ և ուրիշների փորձերից է օգուտ քաղում:

Ահա ընթերցանութեան նշանակութիւնը: Գիտէք արդեօք ինչ ազգեր են գրեանք չունեցող ազգերը, օրինակի համար, Ամերիկայի վայրենի հնդիկները: Այդ հնդիկները անցեալ կեանքի յիշատակներից միանգամայն զուրկ են, միայն մի քանի աւանդութիւնք ունին ծերերից պահպանուած, այն ևս մուժ ու անորոշ, ուստի փորձառութիւն ասած բանդ նորքա ամենեին չտնին: Եշմէ նոցանից մինը հնարէ մի առաւել կատարելագործած զէնք, քան որ սովորաբար իրանք գործ են ածում, շատ երկար չէ առում նորա գոյրութիւնը, ըստ որում երբ որ այդ զէնքը ոչնչանումէ, իսկոյն մոռացվումէ և յիշատակը անգամ չէ մնում: Կաղաքակրթութիւնը անձեռնհան է այն ազգաց, որոնք կարող չեն անցեալից օգուտ քաղել, որոնք

\* Դիմիկիրքէն մէ Տուվելերեալ եւ վաճառաշահան քաղաք է Ֆլանդրիայում:

ասես թէ զրկուած են յիշողութիւնից. — ահա թէ ինչո՞ւ համար նոքս վայրենի դրութեան մէջ են մնում. Անցեալը մարդուս համար անշափ օգուս է բերում. մենք ապրումենք, մտածումենք երեք շրպա հաղար տարբայ փորձերով, և այդ բոլորը գրեանց միջնորդութեամբ։ Վարդիկայի վայրենի հնդիկները ներկայումս էլ նոյնակէս տգէտ են, ինչպէս են երեք հարիսր տարի սորանից առաջ, երբ Անգլիացիք առաջին անգամ հաստատեցին այնտեղ իրանց գաղթականութիւնը։ Ահա ինչ բան է գիրքը, — այդ անցած ժամանակների փորձը. ահա որպիսի մեծ նշանակութիւն ունի դա մեզ համար։ Հիրաւի, գիրքը մի շատ հրաշալի բան է. ասես թէ դորա մէջ ոգի, զօրութիւն կայ, որ կենդանութիւն է տալին մեզ, որ պատասխանումէ ամեն անգամ, երբ մեր խնդիրքը դարձնումենք սորանն.

Ես շատ սիրում լուսանկարը (ֆոտոգրաֆիա) և մեծ նշանակութիւն եմ տալիս նորան. դա մի գեղեցիկ և պատռական գիւտ է։ Կարծիք ես շնուր արեգակը և ասում եմ. «որին որ ես սիրում եմ, նորա յիշատակը պիտոյ է պահես ինձ համար»։ Ուկայն լուսանկարը կարող չէ մեզ հետ խօսակցիւ և մի բան ասել, մինչդեռ գրեանքը, որոնց հեղինակներին երեք տեսած չենք, պատրաստ են մեզ հետ ծիծաղելու և տրամելու։ Ա եր առնունք, օրինակի համար, Վոլիերի կատագերգութիւնքը, կըտեսնենք որ Վոլիերը խնդում, ծիծաղումէ մեզ հետ. վեր առնունք Դան-Լիշտուր, Աերվանտէսը կը պատմէ մեզ իւր զուարձութիւնքը և կրած շարչարանքը։

Եօյժմ զառնանք դէպի մեր խորհրդածութիւնը և տեսնենք ինչ օգուս կարելի է ստանալ գրքից մեր մարմի, խելքի և սրտի համար։

Իմ կարծիքով ընթերցանութիւնը մեծ խորհուրդ ունի մեր մարմի համար, Վոռողջապահութեան գիտութիւնը (բացիցա), որից շատ սակաւ տեղեկութիւն ունինք մենք, չէ մի լոկ խնամածութիւն միայն մեր վերայ, այլ և մեր հագուստի, բնակա-

բանի և մեր զաւակաց վերսոյ ևս ունի մեծ խնամք։ Վաղ  
ջութիւն առաջ բանդ աշխատաւորի երջանկութիւնն է։

Ետք աշխատաւորներ կան, որոնք խիստ վաղ են ենթարկ-  
վում ծանր և դառն հիւանդութեանց, չունենալով այնքան գի-  
տութիւն և փորձառութիւն, որոնք արգելառիթ լինեն նոցա  
վեսակար բնակարաններում ապրելու։ Եթէ դոքա աւելի լու-  
սաւորուած լինեն, այն ժամանակ իրանց համար կը վարձեն  
սենեակ գուցե քաղաքի առանել հեռաւոր մասնում, բայց այն-  
պէս աեղ, որ կը գոտենեն առողջութեան բոլոր անհրաժեշտ  
պայմանները, որ քաղաքի կենտրոնում ամենեն չկան։ Դիցոք  
երեխան յանկարծ հիւանդացան։ որպիսի օգնութիւն պիտոյ է  
հասցնեն նորան, չգիտեն։ Վաստեն դրացիներից խորհուրդ  
հարցնելու, բայց դարձեալ ի զուր, ըստ որում չորս գրացիից  
չորս խորհուրդ են ստանում։ «ամեն գլխից մի մի խօսք»։

Տայց եթէ մի քանի տեղեկութիւն ունենայինք առողջա-  
պահութեան վերայ, խոկոյն կը կարողանայինք հարկաւոր  
զգուշութիւնքը գործ գնել հետեւարար և բժիշկը առանել  
յաջողութեամբ կը կարողանար օգտի համար։ Ետք նախազգու-  
շացնում, պատուական խորհուրդներ է տալիս, բայց նա կա-  
րող չէ ամեն տան մի ոստիկան ևս գնել, որ վերահասու-  
լինեն զգուշութեան ամեն հնարը գործ գնելուն։ Ես կը կա-  
մենայի ամեն տան մէջ դնել մի հատ ոստիկան, բայց այն-  
պիսի ոստիկան, որ ոչ ոքին նեղութիւն չպատճառէր, ոչ ոքի  
ծախսը չշատացնէր, այլ տեղաւորուէր ամեն գերգաստանի  
հօր հոգու մէջ։ Ես կը փափաքէի, որ առողջապահութեան  
լաւ գրեանքը սովորացնէին նորան, թէ ինչպէս պէտք է պահ-  
պանել կնոջ և զաւակաց առողջութիւնը։ Ե՞յն ժամանակ և կա-  
ռավարութիւնը այնպիսի մարդոց հետ գործ կունենար, որոնց

Երբ ժողովրդի մէջ տարածվաւմ, այն ժամանախուր, որ մար-  
դաշտ քաղաքներում մեծամեծ խնամքներու և գլխացաւու-  
թեանց է կարօտ, կառաւարութեան ձեռքից ինչ որ գալիս է  
անում նա հասարակութեան օգտի համար։ Ետք նախազգու-  
շացնում, պատուական խորհուրդներ է տալիս, բայց նա կա-  
րող չէ ամեն տան մի ոստիկան ևս գնել, որ վերահասու-  
լինեն զգուշութեան ամեն հնարը գործ գնելուն։ Ես կը կա-  
մենայի ամեն տան մէջ դնել մի հատ ոստիկան, բայց այն-  
պիսի ոստիկան, որ ոչ ոքին նեղութիւն չպատճառէր, ոչ ոքի  
ծախսը չշատացնէր, այլ տեղաւորուէր ամեն գերգաստանի  
հօր հոգու մէջ։ Ես կը փափաքէի, որ առողջապահութեան  
լաւ գրեանքը սովորացնէին նորան, թէ ինչպէս պէտք է պահ-  
պանել կնոջ և զաւակաց առողջութիւնը։ Ե՞յն ժամանակ և կա-  
ռավարութիւնը այնպիսի մարդոց հետ գործ կունենար, որոնց

շատ հեշտ կը լինէր բան հասկացնել և այնու հետեւ ինքը կառավարութիւնը կը դառնար հասարակութեան կարծիքի արձագանք:

Վհա ընթերցանութեան առաջին և նշանաւոր հետեանքը:  
Կայ մի ուրիշ հետեանք ես, որ ինձ համար նոյնպէս թան-  
կագին է:

Գործաւորը աշխատում է իւր ձեռքերի ընդունակութեան  
վերայ վատահ լինելով: Ըստ բարի, բայց ինչողէս են ստա-  
ցել ձեռքերը այդ ընդունակութիւնը: Ձեռքերին կառաւա-  
րում, աչքը, իսկ աչքը իւր կառաւարելու կարողութեամբը  
պարտական է խելքին: Օքոր օրինակ, ճարտարապետութեան  
ընդունակութիւն ստանալու համար հարկաւոր է գիտենալ  
առարկաների ձեռքը և կրթուած նուրի ճաշակ ունենալ: Ոյն  
իսկ կանոնների և պատճառների հիման վերայ մարդս լինումէ  
ընդունակ արհեստանոր և իւր գործը արժանապէս կատարող:

Ուրեմն գրեանց մէջ հազարաւոր միջոց կայ, որով մարդս  
կարող է զարդանալ և կրթել իւր ճաշակը: Ես միշտ զմայ-  
լումնեմ այն նուրի և գեղեցիկ ճաշակի վերայ, որ նկատում մէ<sup>ն</sup>  
կարչութեան, պասաւառագործութեան և ոսկերչութեան մէջ,  
և դորա միսնդամայն հակառակ, մի քանի ուրիշ արհեստներ վե-  
րին առարկանի տհաճութիւն են պատճառում մէզ, ըստ որում  
նոցա մէջ ամեն տեսակ ոճերը խառն են, օրինակ, միջնադար-  
եան զարդարանքի հետ դրած է և յունական զարդարանքը:  
Կրթուած մարդը այդպիսի սխալ երրէք չի անիլ:

Եկարչութիւնը գործադրելի է ամեն արհեստի. ամեն բանի  
մէջ պէտք է ճաշակ լինի, իսկ ճաշակը ստացվումէ ընթերցա-  
նութեամբ: Իացի դորանից, գրեանքը, զարդացնելով դատո-  
ղութեան ընդունակութիւնը, ստիպելով նկատել մտքերի կա-  
նոնաւոր և անընդհատ հետեւղութիւնը, պատրաստումն և պա-  
տուական գործաւորներ: Հարեանցի նայողին կարող է այդ  
տարօրինակ թուել, բայց անեմ ահա, թէ ինչու վերայ եմ  
հիմնում իմ կարծիքը:

Որպանից քսան կամ քսանը հինգ տարի առաջ անդ լիական

կառավարութիւնը տեղեկութիւն էր հաւաքում գործաւորների դասակարգի գրութեան վերայ: Օ անազան տեղեկութեանց մէջ մի Նելուետիացու նկատողութիւնը աւելի արժանի էր ուշադրութեան: Իսա իւր հայրինիքում, Զիւրիհումը, մի չափերելի մարդ էր, ես կօջումեմ նորան շատ երեկի, պատճառ, այդ մարդը հասարակապետութեան մէջ իւր քաղաքակիցներից ստացել էր աղնուականութիւն: Այդ մարդը յայտնի է Ասչե Անսկիհան մականունով, ըստ որում դա Անսկիուց բաց էր արել մի ջրանցք, որով այդ գետափի բնակիչներին աղասել էր ժանտախորից ու աեսակ տեսակ տենդերից: Վաճանակ նա մեքենաներու գործարան ունէր, որ կարծեմ այժմն էլ կայ: Երբ որ հարցրին նորա կարծիքը իւր գործաւորների վերայ, «ևս պատրաստումեմ», պատասխանեց նա, «անդլիական մեքենաներ» իմ մօտ կան անդլիացիք, հելուետիացիք և շատ նապօլիտանցիք, վերջինները լաւ գործաւորներ են, բայց գեռ ևս չէ յաջողել ինձ նոցանից լաւ սատարներ (подмастерье) պատրաստել, մինչդեռ հելուետիացիք և անդլիացիք լաւ վարպետներ են գառնում: Վարդարե, աւելացնումէր նա, ոչ մի համ նապօլիտանցի չկայ, որ կարդալ ու գրել գիտենար»:

Աւրեմն, ինչպէս աեսնումնը, ընդհանուր մատորական զարգացումը աշխատանքի մէջ անգամ մարզուս օգնումէ: Երկու հաւասար ընդունակութիւն ունեցող գործաւորներից, մի քանի ժամանակ անցնելուց յետոյ, կարդալ իմացողը գերազանցումէ չիմացողին:

Իսյց պէտք է ասել, որ մարդս անընդհատ չէ աշխատում, նա ունի և աղատ ժամանակ, հարկաւոր է միայն հմտութեամբ շահաւետ կացուցանել այդ աղատ ժամանակը, թէ և այդ բանը այնքան հեշտ չէ: Ո՞ի երեկու անդլիացի, սէռ Աօրնվալ Անիս անունով, որ Ալատանից առաջ դրամական գործերի նախարար էր, ասել էր, թէ «մեր կեանքը շատ քաղըր կը լինէր, եթէ հնար լինէր ոչչացնել զուարձութիւնքը»: Այդ օտարութի կարծիքը ես համարում միանդամայն ուղիղ:

Ամ համար մեր սովորական զուարձութիւններից աւելի տաղուկալի բան չկայ: Վայրող օրը արևու աաքին, փօշիների մէջ աննպատակ թափառել, երեխայրը եռեներից քաշաքաշ ման ածել, վատ ուտել, դատարկ դատարկ խօսիլ, անգործ մնալ, երեկոյն վերագանալ առւն, յոգնած, բեզարած, — ահա այսպիսի զուարձութիւնը ևս ուրախութեամբ կը օչնչացնէի:

Աակայն գուցէ կայ հնար աւելի հաճոյական անելու պյտ զուարձութիւնը: Վ.յո, կայ հնար, և այդ հնարը այն էս որ զուարձութիւնը պէտք է ունենան և ուստմասիրական նպատակ: Օչուարձութեան յատկութիւնը այն ժամանակ կը փոխ վի, ըստ որում մարդու ուսանելով միանգամայն նոր զուարձութիւնը է սանաւում: Վ.յո զուարձութիւնը կենդանութիւն ունին միայն նոցա համար, որոնք աշխատումն իրանց կրթել: Եթեցուք թէ զբօսնեքի համար դուք զնումնք դիւդ, ամենեցուն, կը թութիւն շատացած մարդու համար անգամ, լաւ եղանակը ուրախութիւն է, իսկ վատը գանդատի աւելիք, բայց այդպիսի ժամանակ եթէ մարդս փոքր ի շատէ ծանօթ լինի բնական գիտութեանց հետ, ամենայն բոսէ զուարձութիւն: Կը գտնէ այն տեղ, որը անկիրթ մարդու համար ոչ մի հարցա սիրելի բան չկայ: Վնասելի զուարձութիւն է սասանում մարդս ամեն մի բայս, ամեն մի մժեղ ուսանելուց:

Եւ ինքս ինձ օրինակ կը բերեմ: Զնայելով որ եմ շատ սական տեղեկաւթիւն անիմ բուսաբանութիւնից այսու ամենայնիւ շափազանց սիրումնմ ծառեր զննել և ուսանիլ: Եթրեմն ևս ձեւմումն Ելիսեան դաշտումը, որ, ինչպէս ձեզ յայտնի է, խոհեմ կառաւարութիւնը զուարձալի զբօսնեքի տեղ է արել հայց գուք գուցէ չեք իմանում, որ այնտեղի ծառերը բոլորը նշանաւոր ծառեր են: Վ.յնաեղ կայ հաստարմատ և գոյնզգոյն մամիսի ծառը (terpъ), որի վերայ ես միշտ զմայլելով եմ նշայում: Իայց զրանում ինչ զմայլելի բան կայ, կը հարցնեն ինձ: — Ինչ զմայլելի բան, ապա ուրեմն դուք մոռանումք, որ այդ ծառը անգաղար կերպարանափոխուող, հաղուագիւտ

և նոր ծառ է, մոռանումքը, որ այդ ծառը մի անգին գիւտ է մեր պարտէզների համար։ Խսկ այն Դեօդօրա (Deodora) կաղնիները (քերի), այն օտարեկրեայ ծառերը, որ ոչ մի տեղ, բացի Աշխաման Պաշտից, չէք գտնիլ։ Ում յայտնի է այդ ծառերի հաղուագիւռ լիները, նա կարող չէ մի առանձին ուրախութեամբ նոյնեւ նոյն վերուց։ Կրթութեան միջնորդութեամբ բոլոր բնութիւնը մեր սեփականութիւնն է դառնում, իսկ ով որ այդպիսի սեփականութիւն ունի, նա ամեն միլիօններ ունեցողներից հարուստ է։ Շմեն տեղ կան ծառեր, երկիր ու երկինք, — այդ բոլորը մերն է միայն այն պայմանով, որ մենք կարող լինինք զարթեցնել մեր մէջ և պահպանել այն գեղագութիւնը, որ պարզեւել է մեղ բնութիւնը, և որ շատ անգամ ճնշվումէ քաղաքների մէջ փակուած կենցաղավարութեամբ։ կրթութիւնը միայն կարող է կենդանացնել այդ գեղագութիւնը։

Խնչ որ ասացի բնութեան համար, նոյնը կարելի է վերաբերել և գեղարուեատին։ Կիւվերկերկէն շատ պարտաւորեց մեզ, յօրինելով մի ուղեցոյց թանգարաններում ման գալու համար։ Ը արաթ օր գրտունից առնումնելք ուղեցոյցը, իսկ կիւրակէ գնումնելք պատկերներ ուսանելու, ահա բազմաւեսակ և անասելի զնարձութեանց աղբիւր։ Պատկերներից յետոյ մը առաջն են գալիս հին արձանները, միջին գարերի զանազան շիրիմները, — այդ ամենը մեզ համար այն ժամանակ են միայն միտք ու կենդանութիւն ստանում։ Երբ որ մենք ուսանումնելք նոցա, ես չեմ ասում, որ անպատճառ հարկաւոր է հիմնաւորագէս և մանրամաննաբար ուսանիլ, բաւական է, եթէ մի հատ լաւ գիրք կարդանք Ճ.Օ. զարու խոալական նկարչութեան վերաբերեալ։ այն ժամանակ կը հասկանանք վերածնութեան (возвращение) գարու երկելի նկարիչներին, օրինակ, Ուափայելին, և երբ որ թանգարանից տուն կը վերադառնանք, բաւականութիւն և բարելաւութիւն կզգանք մեր մէջ, բատ որում գեղարուեատը բարձրացնում և աղնուացնումք մարդուս հօգին։

մեր ճաշակը այնուհետև աւելի զարգացած կը լինի, մեր արածը և անելուն աւելի լաւ կը հաջախանք, երբ որ կը տեսնենք և կուօանինք ուրիշների արածը:

Այս ներէք ինձ, այստեղ կամիմ պատմել ձեզ մի յիշողութիւն իմ երեխայական կեանքից: Ո՞ի անդամ մայրս պատրաստութիւն էր տեսնում պարահանդէս գնալու, մազերը սանրելու և յարդարելու համար հրաւիրել էին այդ արհեստի վարպետին, որի անունը անդամ միտու է, «Կարկիս էր»: Երբ որ մարդը եկաւ, դեռ ևս պատրաստ չէր մայրս, ուստի ես խօսակցութիւն բացի հետը: «Ձանդարան գնումէք», հարցրեց նուինձ: Ես պատասխանեցի, «որ շատ ուշ ուշ եմ գնում: Հայ զուր», ասաց նա, «այն անդ սովորելու բաներ շատ կան: Ես իրու շուտ շուտ եմ գնում: բայց ես այնուղի մի զարմանալի բան նկատեցի: — Երկու հատ միայն նկարիչ գտայ, որպէս իմանումն կանանց մազը սանտրել ինչպէս որ հարկն է, մինը Ուափայէլն է, որից ես սովորեցայ մազ սանտրելու ամենալաւձեւրը, իսկ միւսը՝ երէնը, մեացածները ամենենին ոչինչ չեն համիանում այդ բանից: Ի՞նչ մարդ, որ գտել էր աղբեր գաղանի զուարձութեանց և աղնիւ զգացողութեանց, ահա համեստ արուեստագէտ, որ կատարելագործվումէր իւր արհեստի մէջ, զարդացնումէր իւր հոգեկան ընդունակութիւնքը, ուստեղ գեղարուկաստական բաներ:

Դնմերցանութիւնը ունի աւելի ընդհանուր օգուտ: Ո՞ենք ամենքս էլ մի տեսակ աշխատաւոր ենք, նշանակած որոշ ժամեր ունինք աշխատութեան: կարծեմ որ այդ խօսքը կարող եմ ինձ համար ես դործ գնել, ըստ որում, հաւասարցնումէմ ձեզ, եօթը ութը ժամ իւր իցի մէջ նստած գրիչով աշխատալը բաց օդի մէջ աշխատելուց պակաս չէ վաստակեցնում և թուլացնում մարդուս: Ինայց ինչ արհեստով էլ որ պարապելու լինինք, մնեք ասած ու առաջ մարդ ենք, յետոյ արհեստաւորք: Ուսղնելով պարապունքներս, մնեք դալիս ենք մեր տունը, մեր կնոջ և զաւակների մօտ, ուր իւրաքանչիւրը մեզանից ունի

իւր հոգսը, իւր ցաւը ոչ աղքատը, ոչ հարուստը և ոչ այլ  
ոք աղօտ չէ այդ բաներից: Ուրեմն ուր և ի՞նչ բանի մէջ  
պէտք է գտնենք մեր համար միսիթարութիւն: Ո՞ւր բարե-  
կամները կարող չեն միշտ մոզ ուրախութիւն պատճառել: Կա՛  
բարեկամիր տուած միսիթարութիւնը, որ սովորաբար պատա-  
հումեր ինձ տամակալ, երբէք և ամենեն չէր բաւականացնում  
ինձ: Եթէ զու հիւանդ ես, սովորաբար քեզ մեծարումն յե-  
տադայ: միսիթարութեամիր: «զարմանալի չէ, որ աչքերդ ցա-  
սումնեն, ինչու որ խիստ շատ ես պարապում»: Ա՞ծապէս շոր-  
համբարութիւն այդպիսի միսիթարութեան համար: Եթէ սի-  
րականիցդ զրկվումն, քեզ ապացուցանումն, որ հանգուցելու  
կազմուածքը արդէն թուլացած էր, և թէ հարկաւոր է հնադա-  
դել բնութեան անհրաժեշտ օրէնքին: Խօսրը այդպիսի միսիթա-  
րութիւնը միայն սասակացնումն ճշմարիտ ցաւը:

Ուր և ի՞նչպէս ուրեմն կարող ենք գտնել ճշմարիտ բա-  
րեկամներ: Դարձեալ գրեանց մէջ, նոցա մէջ կը գտնենք  
չարչարուող և իրանց չարչարանքը պատմող մարդիկ, կը գրտ-  
նենք այնպիսի բարեկամներ, որոնք թէև մի դար մզգանից  
առաջ են ապրել, բայց միսիթարումն չարչարուողներին, համա-  
պաց են լինուած նոցա, խանճելով իրանց արտաառուքը նոցա  
արտաառուքի հետ: Վայդիսի գրեանց մէջ առաջին տեղը բլո-  
ւուրու և Վայդարանը, որ չարչարուողներու միսիթարութեան  
համար է գրուած: Եթէ ներ մայրը կամ կինը հիւանդանայ,  
միթէ այնպիսի չնչին ու անտեղի խօսքերով պիսի միսիթարէք  
նոցար Ու կարդացէք նոցա առաջ Վայդարանը, այն ժամանակ  
կը տեսնեք, թէ դա ի՞նչ գիրք է, ո՞րպիսի թանկագին աղ-  
րիսը է միսիթարութեան, Քրիստոնը, ամես թէ, նորից կին-  
նութիւն է առնուամ և նըստում հիւանդի մօտ նորան միսիթա-  
րելու համար:

Աղորմած պարոններւ աշխատելով ցոյց տալ ձեզ ընթեր-  
ցանութեան մէծակշիռ նշանակութիւնը, եօ դիտեմ և չեմ մո-  
ռանուամ, որ չեշտ բան չէ միշտ գրեանք ձեռք բերելը: Վայ-

բնչու համար մենք հիմնեցինք այս գրատունը: Այն մարդ կա-  
 րող չէ ունենալ գրեանք: ահա մենք ամենեցուն առաջարկու-  
 մենք գրեանք: Դաժուար է հաւատալ, որ լինի այնպիսի մարդ,  
 որ ամիսը չորս կամ ութ կօպէկ չկարողանայ վճարել: որի  
 համար ստանալու է մեղանից ամենալաւ գրեանք: Կահութիւն  
 Ստուծոյ, որ մենք չոնինք աշխատաւորների համար հրատա-  
 րակած գրեանք: մին և ժամանակակից հեղինակների ամենա-  
 լաւ շարադրութիւնքը կարող էք ստանալ ու վայելել: Ուրեմն  
 օդնեցէք մեզ, մենք կարոտ ենք ձեր օգնականութեան ու ձեր  
 նոպատառութեան և իրրե բաժանորդների, ձեր փողերուն և  
 ձեր գրքերուն անգամ: Այսու, եթէ ունիք մի որ և ից ան-  
 պէտք գիրք, բերէք մեզ, ես ձեզ ցոյց կը տամ մի այնպիսի  
 հիմնալի բան, որ միանդամայն շուռ կը տայ բոլոր իմաստու-  
 թիւնը պ. Լիօնէի, որ մեր խորհրդի անգամն է և շատ լա-  
 թուաբանութիւն է իմանում: Այդ այն բանն է, որ ես կո-  
 չառամայ ընկերավարչութեան կանոն: Կառք բերումք մի գիրք,  
 մենք հինգ հարիւր քառասուն բաժանորդ ունինք, ամենքն էլ  
 կարգումն այդ գերքը, — ասես թէ դուք 540 հատոր գիրք  
 բերած լինիք, այդ մի բազմապատկանութիւն է, որ լինումք գու-  
 մարման միջնորդութեամբ: Աններելի է ձեռնատաւ չլինիլ այդ  
 պիսի պտղաւետ գործի ցաջողութեան, բոլոր հանդամանք-  
 ները բարեյաջողումն այդ գործին, կառավարութիւնը ինքը և  
 նպաստաւոր է գորան, զանազան միջոցներով նա աշխատեց շա-  
 տացնել մեր գրատան ընթերցողների թիւը: թէնի ես ամենե-  
 ւին չկամիմ շողոբրթել այս աշխարհիս հզօրներին, սակայն  
 հարկը ստիպումէ ասել, որ նախարարը շատ մեծ բան արաւ  
 հիմնելով քսան հազար գպրոց հասակաւորների համար: Մի-  
 թէ հանա՞ք բան է չըրս հարիւր հազար ջահիլ մարդոց կը ը-  
 թութեան միջոց տալ, չորս հարիւր հազար կուրի աչք բա-  
 նալ: Այդ մի ամբողջ զօրք է, բայց այնպիսի զօրք, որ ոչ  
 ոքին չէ սպանում, այլ ընդհակառակն, իազարութեան և լու-  
 սաւորութեան զօրք է, կառաւաթշութիւնն էլ մեզ ոչ պակաս

բարելաւովթիւնը արական Վայն օրից, երբ ես արժանացայ գրաւ  
տան Նախագահի լինելու պատույն, ամեն քայլափոխիս բարե-  
կամութեան և պատրաստականութեան պատահեցայ: Եւ այ-  
վինք ուրիշն մեր օգտակար զրովթիւնից: Անդ թոյլ են տա-  
լիս այսաեղ Հաւաքութել մեր բաւառութեան համար, Հաւաք-  
վինք ուրիշն և ուսանինք: Խելքով և հաստատ մոքով գործ  
դնելով մեր իրաւունքը, այլ իրաւունքներ ևս ձեռք կը րե-  
րինք, և կը հասնենք այն այսառովթեան: Օր գուցէ պակա-  
սումն մեզ առկարին առ առիթանդանաշ ևս ու ա նախք

Քամախ ասումնէ: Գրանսիան իւր գէնքով գրականու-  
թեամբ և արհեստավ երևելի տէրութիւն է: բայց այդ Տիրան-  
սիան մենք ամենքն ենք և խրաբնեցները մեղանից ուստի եթէ  
խրաբնեցները մեղանից անգործութեան մ.ջ մնայ: Տիրանսիան  
չի ծագիլ: Եթէ քաջ և երևելի զօրք կազմով զինուորները  
զէնքերը բոնեն ու չգործածեն, զօրքը անշուշտ կը յադուի  
Աշինչ այժմ ձեզ խափանասիթ չէ, բնդ հակառակն ամենայն  
ինչ նպաստաւորումն ձեր ինքնակրթութեան: ուրիշն եկէք  
ստորագրուեցէք մեր գրաւանք, ևս ձեզ իրքն անգին հիւրիդի  
կընդունէ: Այս մուսայ զմանամեայ զմէ: Եւս դժման առ

Ասկայն ինչ հետեանք կանենայ այդ շարժողաւթիւնը, որ

այժմ ամեն տեղ տարածուել է: Ես կարծումն, որ գորա հե-

տեանքը շափառանց մեծակշիռ կը լինի մէ յառաջ ա:

Այսօք չկայ, որ հինգ հարիւր բաժանորդ ունեցող գրա-  
տունը մի մեծ բան չէ, բայց այսու ամենայնիւ այդ գրատունը  
շատ նպասէւտ բան է: Եթա արդէն շատ մարդիկ աշխարհի լին-  
եցաւ, և տարակոյժ չունիմ, որ շուտով բոլոր Գրանսիայի ժո-  
ղովուրդը, կարդալ սովորելով, կունենայ իւր ձեռքի տակ  
գրատուներ: Վայդափիսի երեսութիւն հետեանքը անչափ մեծ է: Եւ  
այս Պատմումնութիւնը ու ուգովիկոս Ժաշի ժամանակ մի սեր-  
ժանդ գրել էր թագաւորին, որ կարող է պատրաստել նորա-  
համար երեք հազար պատուական, զաւ զրահաւորուած և դգես-  
տաւորուած զինուորներ: որոնց համար ոչինչ ծախս անել

Հարկաւոր չի լինիր: Տարօրինակ առաջարկութիւն, բայց որովհ չկատե, մեր երկրումը միշտ սկզբումէին զինուորներ, (եթ կարծէմ, որ եթէ այժմ մի այդպիսի նամակ ուղարկուեր զինուորական գործերի նախարարին, անպատճառ գործակալներից մինին հրաման կը տրուեր տեսաւթիւն անելու այդ նամակագրի հետ), ուստի սերժանդին կանչեցին թագաւորի մօտ: Մինչև այն օրը Փրանսիական զօրքի սերժանդները մկնդաւոր էին, թէ ինչ էր նշանակում այդպիսի զինուորութիւնը, ուզիղը չգիտեմ և ես չեմ համարձակվում յայտնել իմ կարծեքը այդ մասին, ըստ որում գեներալ Պավլէն, որ անձամբ ներկայ է գանդում այս տեղ, կարող է կանգնեցնել ինձ: Մեր ժամանակամեջ փոխանակ մկոնդների հրացաններ ու սուբիններ տալ նոցա և այդպէս երեք հաղար զինուոր կազմել նոցանեց: Ուեւ այդ շատ շնչին բան էր բայց ոչ ոքի մըս քով չէր անց կացել:

Մենք, գրատան հիմնողներս, աւելի մեծ պահանջողութիւն ունինք, ոչ թէ երեք, այլ երեսուն միլիոնից աւելի մարդու մենք ուղումենք, այլարանական ձևով խօսելով հրացաններ և սուբիններ տալ: Մենք կամնումենք երեսուն միլիոնից աւելի մարդու աշքեր բանալ, կարծ ասենք, տապնամկատկել զօրութիւններ:

Վհա որտեղ է ընթերցանութեան վերին նպաստակը, բայց այս տեղ էլ, ինչպէս և ամենայն տեղ, յաջողութիւն ունենալու համար պետք է փոքրից պկանել:

Ակայսին եթէ միջոցները սակաւ են, գէ թէ նպաստակը մեծ է, նպաստակը, որ ինչպէս տեսնումենք, հասանելի է ևս: Վագագայից չըուշահանուելու: Համար բաւական է միայն համեմատէլ Փրանսիան երեսուն տարի առաջ ժամանակակից Փրանսիայի հետ: Վայս գրատունից ես մի հետեւանք էլ եմ սպասում զրը գուցէ շատերը, որնք այժմ աշխատումն ժամանակ վերջի կրթութեան համար, չունին իրանց աշքի առաջ են սպասում, որ մարդոց ինելը զարգանալով, հետզհետէ կը

հանգարտութիւն և կերպերու յօւղմունքը: Ահա արդէն մի դարից աւելի է, որ մի յեղափոխութիւնը հետեւում միւս յեղափոխութեան: Այդ յեղափոխութեանց անհրաժեշտ հետեւանքը այն է, որ կազմվում է մեկ մէկու թշնամի և հակառակ կուսակցութիւնը, որոնք բաւականին յաջողութիւն և անյաջողութիւն ունենալով, չեն յուսահատվում անյաջողութեան ժամանակ և աւելի ներողամբ չեն լինում: յաջողութեան ժամանակը մասնաւում է ուստի այս անունը:

Եղայ կարծումն, որ կայ տեղուուր այդ բայր կուսակցութիւնքը կարող են հաւաքուել: այդ տեղը ճշմարտութիւնն է: Վմեն անդամն երբ որ Գրանտիայում մի որ և իցէ հարց օրինառոր կերպով քննուի և այնուհետեւ ամենում դիւրըմբառնելի լինիւ այն ժամանակ կը կազմուի հասարակութեան կարծիք, որ կը լինի ամբողջ երկրի կարծիքը և ոչ թէ մի որ և իցէ կուսակցութեան: Կերկայումն այդ բանը նկատելի է վաճառականութեան պատրութեան մերաբերութեամբ: Վմեն կուսակցութեան մէջ կան մարդիկ, որոնք հետապուած են այդ աղաւութեան, այլը ընդհականակին չեն ուզում, ուստի այդ հարցը կուսակցութեան հարց չէ, այլ ազգային: Լոյսը արդէն մկնել է բացուիլ, և դա անշուշտ կը ամրապնետէ վերջապէս իրաւարի վերայ: Տարածենք կը թուամբութիւնը որքան երկիրս կրթուած լինի, այնքան ճշմարտութիւնը աւելի կը ամրապնետէ: Այսպէս մենք կը մեղմացնենք կիրքերը որոնք մինչև այսօրս դանդաղեցնում էն աղաւութեան շարժողութիւնը, նաև կանչեանացնենք ժողովրդի մէջից նախապաշարմունքները ամենայն նոր բանի դէմ, այն կանխակալ կարծիքները, որոնց ամենայն քայլափոխութեամս պատսհում էն, երբ պաշտպանումն աղաւութիւնը: Ամրկաւոր է յարգել նախնէքներուա, բայց ոչ կողմնապահութեամբ և ոչ տիմարութեամբ:

Կերկայումն, երբ որ բանը աղաւութեան հարցին է, վերաբերում, հարցնումն ձեզնից աղաւութեան հարցին է: Ուստի սպազմի մէջ կորէսպազմի կը դուք կարդար կը դուք կարդար:

ուրեմն մերերից չէք դուք: — Խաղաղ պատկես լինիւ ես ազա-  
տութեան կուսանկցութիւնից եմ: Այս ժամանակ ու այս ընդու-  
նակը որ աշխարհութեամբ կռւասնիւք անցեալը: Կիմանանք  
էսպէս ինչ էին ուզում մեր հայրերը, կը տեսնենք նոցա պա-  
կասութիւնքը և արժանաւորութիւնքը, գեն կը ճպենք առա-  
ջնանիք և կը ափականենք մեզ վերջինները, այս ժամանակ  
կը հսկարտուին կիրքերը: Վայց այդ նպատակին հանելու  
համար անպատճառ հարկաւոր է տարածել կրթութիւնը:

17-<sup>м</sup> ամենանոր միտք շունիմ հերթքելու մեր հայրերի արժանաւորութիւնը՝ շեմ ուզում հերթել 1789 թ. կանոնների ծանրակշռ նշանակութիւնը, այն կանոնների, որոնց ես ինքու միշտ պաշտպանել եմ, ևս ուզումմամ միայն այդ կանոնները մաքրել ջնջել այն, ինչ որ նոցա ցածրցնում, և տալ նոցա իրանց նախկին գեղեցկութիւնը; Առաջին ազգային ժողովի անդամների դրօշակը է եւ իմը. — ազտառութիւն հաւասարութիւն, եղայրութիւն; Այդ գեղեցիկ դրօշակի վերաբից ես ոչինչ չեմ ուզում ջնջել. բայց կրթութիւնը կը տայ մեղ կարութիւն առելի բա հանկանարու նոցա մեծափորհութ նշանակութիւնը:

Եզաւորւթիւն, բայց ոչ արիւնաշագանիւն ձեռքերով, մէր հասկացզութեամբ աղասութիւնը մարդու իրաւունքների և նորա պարտականութեանց լիակատար, ճիշջ և խոհեմ գործադրութիւնն է ։ Առաջնաւունք մասնաւունք ունի առաջնորդութիւնը ուղղի ։

Հաւասարութիւն, բայց ոչ այն նախանձուութիւնը, որ պատրաստ է ամենայն բոլէ սարկանաւութեթեւ ուրիշները նորա հետ առըկանումնեն, այլ այնպիսի հաւասարութիւն, որ բոլոր մարդկանց բարձրացնումն ապլով նոցա մրաքերին մի ուղղութիւն, հարկադրելով նոցա խոփի մի և նոյն յեզուով, և ապլով նոցա մի սիրա և մի հոգի։

Եղբայրութիւն, բայց ոչ լոկ ողջրմածութիւն, որ անցողաբար աշխատումէ թեթևացնել անըռութելի ցաւը, այլ այնպիսի եղբայրութիւն, որտեղ հարուստը և ազքատը, զօրաւորը և անզօրը, ձեռքը և պատանին ձեռք ձեռքի տուած մեկ մէկու օգնե-

լով՝ յառաջ են գնում մի լաւագոյն ապագայի հասնելու համար, եղբայրութիւն, որ երկու թշնամուն էլ յաղթում; — տղիտութեանը և աղքատութեանը:

Ունենալով այդ գրոշակը — ազատութիւնը, հաւասարութիւնը և եղբայրութիւնը, մենք բացարձակապէս կը պահպանենք մեր նախնի փառքը և շլուած մեծութեամբ բոլոր աշխարհին կը զարմացնենք:

Դիրանսիան իւր զէնքով առաջի երկիրն է աշխարհիս երեսին, ինչու համար նա իւր իսաղաղափրութեամբ, կրթութեամբ, բարեկեցութեամբ և իւր քաղաքացիների բարոյականութեամբ ևս առաջինը լինելու չէ: Ինչու համար բովանդակ աշխարհի առաջ մենք երեւլի ազգ համարուելու չենք:



## ԵՐԱՎԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

աշ մզմելով, մն հյու միանարձով ցղմցողոր դրու թւ, Ե  
մա նըստի ու շինք պահապ է սկյառ պահ ցմցին այսպաս  
է տիկ շինք և նազգրմի մն մատչելք մշտի ըլու՞ Շառ  
ուն մնուա ու մնուա խուռ ունուա ու ունուան ճանու Շ

Վազգային կրթութիւնը, իրակ քաղաքական ապահովութիւններից մինը, որ բան է Քրանսիայում... բայց՝ մերի կայում վաղուց արդէն յայտնի է, որ ազգային կրթութիւնը կեանքի և մահու խնդիր է: Խնչ որ ամերիկացիք կրթութիւնն համար արել են, շատ և շատ գերազանցումէ այն փորձերին, որ եղել են հին ցամաքահոգի վերաբ:

Վարիկացիք ամեն տեղ հիմնել են զանազան աստիճանների դպրոցներ, որոնք ամենաձքաւորին անգամ միջոց են տալիս հիմնաւոր և բազմակողմանի կրթութիւն ստանալու։ Խորաքանչիւր ամերիկացի, հինգ տարեկանից մինչև տասնըհինգը, կարող է սովորել կարգալ, գրել, համարել և նկարել։ Նորաներկրաչափութիւն և աշխարհագրութիւն են սովորեցնում։ Կարեռ տեղեկութիւնք են հազորդում ֆիզիկայից և առօղջապահութեան գիտութիւնից։ Նաև մարմարագութեամբ դարդացնումնեն նորա մարմինը։ Այստեղութեան, հրապարակախոսութեան և երգեցողութեան մէջ վարժելով, պատրաստումնեն ուրան քաղաքական կեանքից համար։ Ճն վախում բարոյականութեան և քաղաքագիտութեան վերայ ևս խօսելու նորա հետ։ Վայսպէս փոքրուց արգեն ազդումն նորան աէր և յարգանք գէ պի սահմանադրութիւնը և աղատութիւնը։

Եշթէ նախակրթութիւնից յետոյ, գեռահաս մարդը զգումէ իւր մէջ զօրութիւն կրթութիւնը շարունակելու, նա կարող է մտնել վերին ուսումնարաններ, ուր երեք կամ չորս տարի շարունակ կարող է ուսանիլ ալգերրա, եռանկիւնաշափութիւն և նորա գործագրութիւնը, հաշուեկիտութիւն, քաղաքական անտեսութիւն, ֆրանսիական լեզու, երկրաբանութիւն (геология), քիմիա և այլն: Կարճ ասել, չկայ այնպիսի գիտութիւն, որ նա չկարողանար ուսանիլ:

Այդ բոլոր գպրոցները միանգամայն ձրի են, այսինքն հասարակութիւնը ինքը տալիս է գրեանք, գրիչ ու թուղթ անգամ. հօրից միայն երեխան են խնդրում և ուրիշ ոչինչ: Այդպիսի մեծակշիռ օգուտներ տալով ազգին, որ արդէն վաղուց է հասկացել, թէ կրթութիւնը կազդուրում մեր ընդունակութիւնը և թէ մարդու ճշմարիս զօրութիւնը գիտութիւնն է, ամերիկացիք շատ նշանաւոր հետեւանքներու են հասել: Օրինակի համար, Վաստաշուղեցումը երեխանների մասը, հինգ տարեկանից մինչև տասնը հինքը, գնումն հասարական գպրոցներ. եթէ այդ թուի վերայ աւելացնենք և այն երեխանները, որոնք գնումն մասնաւոր ուսումնարաններ կամ իրանց տներում են կրթվում, այն ժամանակ հասկանին կը լինի, թէ ինչու համար Այր Անգլիայում շատ հազիւ կը պատահի մի հատ կարդալ չիմացող մարդ: | ուսաւորութիւնը այնտեղ ընդհանուր կանոն է, խոկ տղիտութիւնը բացառութիւն:

Այն հարցը, որով մեք ներկայումն զբաղուած ենք, արդէն վճռուած հարց է Վիացեալ-Աահանգներում: ուր հասարակական կրթութիւնը ձրիական է և հասել է վերին կատարելագործութիւնն: Կարող է արգեօք օրէնքը ստիպովական անել ուսումնառութիւնը: Ասքեանցի նայելով, ոչ մի տարակոյս չկայ, այդ մասին: Խնչ իրաւունքով հայրը կարող է իւր զաւակներին տղիտութեան մէջ թողնել և այդպէս հասարա-

կութեան վեասակար անդամներ պատրաստել, մինչդեռ համարակոթիւնը ինքը իւր զերայ է աւենում ուսման բոլոր ծախսերը: Ո՞ի թէ հասարակութեան էական օգուտը այն չէ, որ ամենաչաւոր քաղաքացին անդամ հասկանայ իւր իրաւունքներն ու պարտականութիւնը և ըստ կարողութեան օգուտ քաղէ իւր ընկունակութիւններից: Ո՞ի թէ այդպիսի դիպուածում մեղադրելի է այն բարերար միջնորդութիւնը, որ ընդհանուրին օգուտ է տալիս, որ առանց մի վեաս աւալու հօրը, երեխային հոգաբարձութիւն է անում: Խրիւսկղբունք այդ անհերքելի է, բայց գործադրութեան մէջ պատահումն դժուարութիւնը և անիրաւութիւնը: Փարիզում և այլ մեծամեծ քաղաքներում այդ տեսակ միջոցը կարող է յաջողութիւն ունենալ. բայց գիւղերում, ուր հասարակութիւնը բաղկացած է այնպիսի տներից, որոնք մեծ հեռանորութեամբ բաժանուած են մէկ մէկուց, ուր ամբողջ ամաս երեխաները հարկաւոր են իրանց մայրերուն և ուր ձմեռն անդամ մայրերը կարող չեն և յանձնառու չեն լինիր առանց նոցա մնալ տանը, ուր գործադրութիւնը միայն իւր ձեռքերի աշխատութեամբ մի շնչին վարձադրութիւն է պատճենում: Ինչ է անելու այդանդ դատաւորը այն մարդու հետ, որի միակ մեղքը իւր աղքատութիւնն է: Աօրը պատժելով, նա ամբողջ վերդաստանին մահացու հարուած կը տայ, իսկ կրթութեանը կը հաղթրգէ մի գեսակ հրեշին բնաւորութիւն: Բայց եթէ նա չկամենայ դէպի պատիժը դիմել, այն ժամանակ օրէնքը կը դարձնայ անօգուտ և անխորհուրդ սպանեալիք: Խմբ կարծիքով Վայրիկայում այդ հարցը վճռելու եղանակը ամենալաւն է: Վայրիկայում այդ գործը այնպիսի փափկութեամբ և գրաւողականութեամբ է կատարվում, որ հազիւ թէ ստիպողականութեամբ կարելի է նոյն հետեւանքներին հասնել, մնաց որ քաղաքացիների ազատութիւնը և հայրերի իշխանութիւնը ամեննին չեն բանարարվում այդպիսի արարողութիւնից:

Բայց արդեօք որքան է նստում Վայրիկայում այդպէս

գեղեցիկ անօրինուած դպրոցները: — Շատ թանկ, մարդադլուխ  
միջին հաշուալ մի մի դոլլար, կամ հինգ ֆրանկ է համար-  
վում: Այս դառնու մասն մասն է տիպայուած: ԱՅՆ է դա  
Եթէ Գրամսիայում՝ ամեն մարդ մի մի դոլլար տար, ընդ-  
ամենը 200 միլիոնի կը հասնէր, մոռզ այն գումարը, որ նշա-  
նակած է ձևարանների և վերին ուսումնարանների համար:  
Փարիզի մասն կը նինէր 9<sup>1</sup>, միլիոն: Վայս Փարիզը, որ իրան  
շատ շուայլ է համարում, իրագէս զոհում ազգային կրթութեան  
համար 2<sup>1</sup>/2 միլիոն, որ 4/3 մասը անդամ չէ անում, ինչ որ  
նատում: Այդ բանը Վայրիկայում: Վհա դէսի ուր հարկածոր  
է մեզ դիմել, միայն այդ գնով մենք կարող մնիք հանել մեր  
ժողովութեան ժառանգական տղիսութիւնից: և կազմել նորանից  
մի քաղաքակրթած աղջութիւն: Խօսք չկայ, որ այդ բաւա-  
կան մեծ զրհ է, բայց եթէ կամենումները, որ ընդհանուր ձայ-  
նատվութեան իրաւունքը մի բարերարութիւն լինի, և ոչ մեծ  
մշտական սպառնալիք, ապա ուրեմն պէտք չէ երկմտութեան  
մէջ մենք: Այս մոռանալու չենք, որ այդ ծախոր անպառող  
չի լինիր: Վիացեալ: Առհանգների օրինակը մեզ ցոյց է տա-  
լիս, որ յառաջադիմութիւնը կրթութեան մէջ մեծանիկ նպան-  
առաջընթաց գիւղական տնտեսութեան և տարածագործութեան  
(մանվացտուրա) դարդացմանը:

Դործաւորի բարդական վարդացմամբ, բարելաւանում: Կ  
բազմանում: նորա աշխատութեան արու զը: այդ ամենիցուն  
յայտնի և անուրանալի ճշմարտութիւն և հասարակութիւնը  
նոյն շափով և շահվում: որ շափով որ շահվումն մասնաւոր  
անձինք:

<sup>1)</sup> 1860 թ. Պատառութիցի ընտկիչների թիւը հասնում է 1,211,494  
հազի ծախալ զարգացների համար մինչեւ 1,612,823 դոլլար: Այդ համար մէջ  
չէ մօնում զարգացների շնորհեարը և վերանորոգութիւնը և ու դառնուր-  
քերի համար գնարաւած փողերը: Այդայն լուսաւորութեան դործերի կանոր-  
ական կառավարութեան հաշումնայելով, որ հրատարակուեցաւ 1863 թ.  
իրագան իւր աշակերտի համար եղած ծախալ զեց գոլլար և 44 կենա է:

Դաստիարակութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ նախապատրաստութիւն կեանքի համար, որով սկսվումէ մարդուս մտաւորական զարգացումը, բայց այդ բաւական չէ, ցանկալի է, որ գպրոցից գուրս գալուց յետոյ ամեն օրից մի նոր դաս ստանար նա, կարծ ասենք, անդադար նա ուսանէր, որպէս զի արժանաւոր մարդ, ճշմարիս քրիստոնեայ, լաւ արհեստաւոր և բարեկիրծ քաղաքացի լինէր: Այս այն անգին ծառայութիւնը, որ ձրիարար անումնն հասարակութիւնը, եկեղեցին, օրագիրները, ազգային գրատունները, հրապարակական ընթերցանութիւնքը և այն անհամար ընկերավարչութիւնքը (accoquiaçia), որոնք կրօնի, գիտութեան և հասարակական կարծիքի կենդանութիւնը միշտ հաստատ և անխախտելի են պահում: Այդ է պատճառը, որ ընկերավարչութիւնը որքան որ քաղաքական ազատութիւն է, նոյնքան ևս հասարակական է, նորա մեծ նշանակութիւնը և խորհուրդը այն է, որ անխոնջ պատերազմումէ տղիտութեան և մոլիք կիրքերու հետ, լոյս է տարածում այն ողորմելի խրճիթների մէջ անգամ, ուր ընակվումնն նախանձ և ատելութիւն, դարձեալ ընկերավարչութիւնն է, որ յեղափախութեանց առաջը բռնումէ, ոչնչացնելով նոցա սկզբնական պատճառները:

Աւելին, կրթութիւնը ու քաղաքագիտութիւնը միօրինակ պաշտօն են կատարում: Եթէ ուշի ուշով նայելու լինինք բանի վերայ, իսկոյն կը նկատենք, որ բոլոր հիմնարկութիւնքը մի նպատակ ունին — համաձայնեցնել քաղաքացիների կարծիքները և ցանկութիւնքը, գործիք անել կառավարութիւնը ազնուամբ, առեարական, բարեկիրծ և խաղաղասէր հասարակութեան: Այդ նպատակին հասնելու համար կայ մի հնար, որ այս աշխարհիս նման հին է, այն է հետամուտ լինել ճշմարտութեան և արդարասիրութեան, որոնք լինելու են տիրապետող տարերք հասարակութեան մէջ:

ուսպանքամ չ է մեծ, և չ այլ չ ու դա ունի տփազախռութե՛  
առև ուսքըսն Աւանիսի խող, զանո՞ց հպատակ և իշխառութե՛  
դր, և իշխանաց, և մաժուաց բայ բայ զանութեաց մաժայու  
զամաս սաք զու՞ց ուղիո մմաս լուսէ, զայսար սդուր ունիսուլոր  
դուամանծուն իբ սնբար, ումասաւ ամ զարսքամ, զմաս ձեամ, ամ  
նեղդիմայ և գուասամնդայ այլ չամենուսինց ուղիուեց, բայս  
ամին հա, զմայի վառամ միջմա մու ա՞՛յ ութմի զազայրաց  
-րա, զդմանդրաց, միջմրմիմ, զմայի տփազախռութե՛ մմասա զայ  
և զգմայի մմացը մմայ մախայրացը, զմամմասար միջուր  
